

Պայմանագրի շնորհման մասին տեղեկություն

Խորհրդատվական ծառայություններ

Ծրագրի անվանումը. Հայաստան	Հագրամյակի	մարտահրավեր	հիմնադրամ	-
Պայմանագրի նկարագիրը.	Գյուղատնտեսական տվյալների ուսումնասիրություն			
Հաղթող ընկերությունը.	ԱՎԱԳ Սոլյուշնս ՍՊԸ			
Պայմանագրի ստորագրման ամսաթիվը	2008թ. սեպտեմբերի 16			
Պայմանագրի գինը.	12,345,500 AMD			

Աշխատանքների շրջանակը.

Խորհրդատուն պետք է համադրի և համեմատի տարբեր աղբյուրներից ստացված գյուղատնտեսական տվյալները՝ Համաձայնագրին նախորդող ժամանակահատվածում գյուղատնտեսության բնագավառի իրավիճակի մասին ՀՄՀ-Հայաստանին ելակետային տվյալներ տրամադրելու նպատակով: Տվյալների գնահատման առաջնային աղբյուր է հանդիսանալու Ազգային վիճակագրական ծառայության /ԱՎԾ/ կողմից 2004 և 2007 թ. իրականացրած Կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը /ԿՄԱՀ/ և մասնավորապես վերջինիս բաժին Զ-ն, այն է՝ Գյուղատնտեսությունը: Բացի այդ Խորհրդատուից պահանջվելու է կատարել հետևյալ համեմատությունները. (1) ԿՄԱՀ տվյալների գնահատման արդյունքները համեմատել այլ աղբյուրներից ստացված տվյալների հետ, այդ թվում՝ ԱՎԾ Գյուղատնտեսական վիճակագրության բաժնի կողմից իրականացվող 4 մասից /հարցաթերթիկից/ բաղկացած ամենամյա հետազոտություն, ԱՎԾ-ի կողմից ՏԱՄԻՍ-ի ֆինանսավորմամբ իրականացված Գյուղատնտեսության ընտրանքային հետազոտություն /2004/, Գյուղական Ձեռնարկատիրության և Փոքրածավալ Առևտրային Գյուղատնտեսության Ձարգացման Ծրագրի Գյուղացիական տնտեսությունների հարցաթերթը և տվյալների այլ աղբյուրներ, որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում, ՋՂԾ Ծրագրի կառավարիչ ԷյՍԻԴ-իԱյ/ՎՈԿԱ-յի կողմից մշակված մշակաբույսերի բյուջեով, և (2) 2004 ԿՄԱՀ Բաժին Զ-ի արդյունքները 2007 ԿՄԱՀ Բաժին Զ-ի հետ:

Տևողությունը. 2008թ. սեպտեմբերի 16-ից մինչև 2009թ. փետրվարի 16-ը

Խորհրդատուի անունը	Միավորը	Ֆինանսական առաջարկի գինը*	Զբաղեցրած տեղը
«Ավագ Սոլյուշնս» ՍՊԸ	98.7	-	I
«Բեյքեր Թիլի Արմենիա» ՓԲԸ	65	-	III
Բիզնեսի և համայնքի զարգացման կենտրոն ՍՊԸ	79.7	-	II

* Խորհրդատուի որակավորման ընտրության մրցութային գործընթացին համաձայն, գնային առաջարկ ներկայացնելու համար հրավիրվում է միայն ամենաբարձր միավոր ստացած թեկնածուն